



## ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՍՈՒՆԵՒԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՒՌՆԻԱ ԸԱՐԱԹ 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1871

ԹԻՒ 918

#### ՔԱՂԱՔԱԿԱՆ

Լաւոյի լըզը իրենքը միշտ զբաղեցաւ են 'ի վերայ իրեն տեսակցութեանցը որ տեղի ունեցաւ 'ի մէջ Գերմանիոյ և Մատրիոյ կայսերաց : Ինչպէս յայտնի է , այս տեսակցութեանց առաջինը իշխել մէջ և երկրորդը Սալապուրի մէջ եղաւ . ուր ներկայ էին յիշեալ երկու վեհապետաց առաջին պաշտօնեայնքը այսինքն Պիսմարք իշխանը և Վայսթ կոմսը : Երաւի իրենքը զանազան մեկնութիւններ կուտան այս երկու մեծ տէրութեանց մէջ եղած դաշնագրութեանը կամ քաղաքական համաձայնութեանը : Ոմանք կըսեն թէ այս համաձայնութեան նպատակը ուրիշ բան չէ , բայց միայն Լաւոյի խաղաղութիւնը ապահովելն է , և այս պատճառաւ է որ Սալապուր և Իտալիոյ կառաւ վարութիւններն ևս հրաւիրուելով՝ փութացան իրենց հաւանութիւնը տալու յիշեալ քաղաքական համաձայնութեանը : Իսկ ոմանք կըսեն թէ այս դաշնագրութեամբ՝ մօտիւ տը Պիսմարքին նպատակն է միտակ թողուլ զՎաղըիան , որպէսզի չկրնայ ապապայսն մէջ իւր վրէժխնդիր դիտաւորութիւնները 'ի գործ դնել ընդդէմ Գերմանիոյ : Օ՛հարգ և ինչ տարակոյտ չկայ թէ այս վեհապետական տեսակցութիւնները , որոց հետեւեցան յիշեալ երկու կայսերութեանց առաջին պաշտօնեայնք բանախօսութիւնները Վասթէյնի մէջ՝ քաղաքական խիստ մեծ նշանակութիւն ունին :

Ինչ ժամանակէ ետեւ պիտի տեսնուի թէ ի՞նչ աւժեք ունի կարծիքը կենդանաւոր անձանց ումանց , որք կըպնդեն թէ Գերմանիոյ ու Մատրիոյ դաշնակցութեան բնական հետեւութիւնն պիտի ըլլայ դաշնակցութիւն մի 'ի մէջ Սալապուր և Վաղըիոյ :

Վաղըիոյ հասարակապետութեան նախագահը հետեւեալ համառօտ պատգամաւորը յուղարկեց ազգային ժողովոյն նախագահին .

#### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Ընթեպէն հետեւեալ նամակաւ ընկալաք երկար յօդուած մի , որ երախտագիտական աշնիւ յայտարարութիւններ կըպարունակեն Ս . Լըուսաղէմայ ամենապատիւ սրբազան Պատրիարքին և նոյն վանուցարժա . Ս'իւրաքանութեան նկատմամբ , ուստի յօժաւրամիտ կըփութամք հրատարակելու նոյն յօդուածը , Յարգոյ խմբագիր Ս. Դաւիթ ,

Ս. Դաւիթ , 26 Յուլիս 1871 :

Ստորագրեալ համարիւն եղբարքս չորս ու կես տարի խնամուած ըլլալով սրբոյն Սաղիմայ մայր արքային խնամոց ներքեւ , եւ ուսման աշակերտելով նախնի գահակալ ամենա . Ս . Ս . Եսայի Պատրիարք հօր բացած ժառանգաւորաց ուսումնարանին մէջ , այս օրերս բաժնուած կըգտնուիմք նոյն մայրախնամ գրկին . ուստի ինչպէս որ հարկ է բարեբարեւոյն եւ խախտագիտ լինիլ իւր բարեբարին , զգացած ենք կըզգամք նոյն սրբազան պարտքը նաեւ մեր , որ բեռնաւորուած ենք քէ Ս . Ս . Երոտոյս եւ քէ ընդհանուր ազգութեան անփութարիւնի բարիքը , մեր նկարական եւ բարոյական (մտաւոր) զարգացման առթիւ . եւ որովհետեւ միայն զգայք բաւական չէ , եւ քէ , որովհետեւ սրտի զգացումները յայտնեցու համար խոստովանութիւնն է . ճշմարիտ ու անկեղծ զգացում ըլլայնուն համար ալ բարի գործով ապացոյց հարկ է , անոր համար հետեւեալը նուիրած ենք իբր յայտարար մեր երախտագիտ սրտից անկեղծ զգացմանց , որոյ մի օրինակն է զոր կըխրկենք Ձեր ազգասիրութեան , որպէսզի նրապարակաւ եւս ձօնել կարողանամք մեր շնորհակալութիւնը համայն ազգութեան . վասնզի վախկնդ Ս . Ս . Երոտոյս քէ նսգեւոր եւ քէ մարմնաւոր

Մեծարգոյ նախագահ ,

Իմ առաջին պատգամաւորս պէտք չէ որ ունենայ և չկրնար ունենալ բայց միայն մի նպատակ , այսինքն՝ ազգեւ զձեզ որ իմ թարգման ըլլաք ազգային ժողովոյն առջև և իմ շնորհակալութիւնս մատուցանէք նմա վասն պատուոյն զոր ըրաւ ինձ՝ հասարակապետութեան առաջին պաշտօնատարութիւնը յանձնելով ինձ , և մանաւանդ իւր բարձր վստահութեան նոր աստղոյց մի տալով ինձ :

Եթէ այս վստահութեան արժանի ըլլալու համար բաւական է հասարակաց օգտից նկատմամբ բացարձակ անձնանուէր զոյգմունք ունենալ , կըհամարձակ ըսելու թէ արժանի եմ նոյն վստահութեան , և շնորհակալութիւնս կըմատուցանեմ ազգային ժողովոյն ամեն կուսակցութեանց , որք հաճեցան մոռանալ զտարածախնութիւնները որք կրնան քանի մը կէտերու վերայ զերեւք բաժանել , առ 'ի տալ գործադիր իշխանութեան մեծագոյն զօրութիւն , որով մատակարարել նմա ամենէն մեծ միջոցները բարիք ընելու :

Ըզգային ժողովը կրնայ վստահ ըլլալ որ՝ թէ դիտաւորութիւններով և թէ՛ տեսողութեամբ , կատարելապէս միացեալ իրեն հետ՝ պիտի աշխատիմք մեր գեթաղը հայրենեաց վերքը դարմանել , և ըստ կարի շուտով ազատ կացուցանել զայն , և միանդամայն լաւապէս կարգաւորեալ , թէ՛ ներսէն և թէ՛ դրսէն խաղաղեալ , օտար յարձակմանէ փրկեալ և եթէ կարելի է՝ երկու աշխարհաց ազգաց առջև ևս յարդելի և սիրելի ընելու պիտի աշխատիմք :

Այս օրինակ ըլլայ պիտի իմ՝ ջանից հաստատուն նպատակը . և եթէ ազգային ժողովը և եւ կըյաջողիմք ձեռք բերելու զայն կամ թէ նոյն նպատակին մօտենալու , յայնժամ պիտի կարողանամք՝ մեր աշխատանաց պայմանաժամը հասնելուն , աներկիւղ ներկայանալ ազգին առջև և վերադարձնել նմա անփնա զմեծագին աւանդը զոր յանձնած է մեզ :

բարիքները , վայելած կընամարտիմք ամբողջ ազգութեան բարիքը . հետեւապէս շնորհապարտ կըգտնուիմք ամբողջ ազգութեան : Արդ յուսադիր ըլլալով Ձեր սիրելի բնօրհնութեան՝ որով աւանկ յատ նկարեր բնօրհնած էք Ձեր ազգօրհն քերթիւնն ապաւրեզ , կըխնդրեմք նաեւ որ այս փորձեան նոյն պատուական քերթիւնն անկիւն մը զնորմէ բարեհաճիք , որուն կատարման մնամք սպասող :

Երեսնա Պաղտասարեան Ս. Երեմիայի :

Յարութիւն Պաղտասարեան Ս. Երեմիայի :

Ամենապատիւ սրբազան Պատրիարք Հայր

սրբոյ Երուսաղէմայ , և գերապատիւ Տէրաբ :

Ահա հասանէն աւուրք յորս մնայ մեզ լքանել զայս վայր յանկալի , յորում երկրորդ անգամ ծնաք 'ի մարդ բարոյական . ահա ունիմք 'ի մտուտ հատանել զերկայնութիւնն ճանապարհին սիրտունէ հայրենեաց մերոց . յայտալիս նշանաւոր պահու զարթնուն 'ի սիրտ գզգայուն զգացմունք նուիրական , որպէս և մեք իսկ զգամք յանձնել մեր զնախկին և զսրբազան յանձնաժեշտ պարտեաց , զոր փութամք ընել նախ քան զօտարանալ մերում՝ յանձնարարելով խնամոց սրբոյ Սաղիմային մայր Ս. Երոտոյն տանա թորգոմայ . զի դեռ ևս ունիմք վախճել վայրկեան ինչ հաղորագրութեան վերջնական . վայրկեան իմն ուր վերջանան ամենայն անկալութեանց կատարումն ծանրաբեռնեալ զմեզ ընդ անհրաժեշտ պարտուց երախտագիտական զգացմանց . վայրկեան բարեպատեհ , յորում՝ պարտիմք զամենայն մթերս մտաւոր աղբատիկ գանձուցս առ բարեբարս մեր նուիրել , վերջապէս ունիմք ժամ՝ բարեպատեհ ուր կրկին սրանան տեսութիւնը մտաւոր և հոգեւոր աշտոյ մերոց տեսանել և չափել զանկեղծի մեծութիւնս և զկենսական օգուտս նուիրեալ մանկանց ազգին հայրական ջանք բազմակր Հօտապատիւ , և համախորհուրդ միաբան Ս . Հարցս

Պատգամաւորս վերջանելով , չեմ մոռնար շնորհակալ ըլլալ ձեզ , մեծարգոյ Վախագահ , վասն գործակցութեանը զոր մատուցել ինձ՝ միշտ , աղաչելով զձեզ որ ընդունիք իմ սիրալիւ և բարձր յարգանաց հաւաստիքը :

Ե . ԹԻՒՄ

Վախագահ գաղ . հասարակապետութեան :

Խաղիոյ կառավարութիւնը՝ թէպէտեւ սիրով է այժմ Վաղըիոյ հասարակապետութեան հետ , բայց անոր աստղայ քաղաքականութեան վերայ ամենին մտահոգութիւն չունի . վասնզի ազգային ժողովոյն մէջ մօտիւ թիւիք յայտնապէս հասկցուց կաթոլիկ եպիսկոպոսաց որք աղերսադիր մատուցել էին՝ վերանորոգելու համար Վաղիւն աշխարհական իշխանութիւնը , թէ Վաղըիան խիստ տկար կացութեան մէջ կըտնուի և ժամանակ չունի այժմայե դործոյն ձեռք զարնել . ըսելէ որ եթէ ժամանակ և կարողութիւն ունենայ , պիտի աշխատի աշխարհական իշխանութիւնը վերահաստատելու , այսինքն պատերազմ հրատարակելու Խաղիոյ դէմ :

Այս պատճառաւ է որ Խաղիան փութացաւ Գերմանիոյ և Մատրիոյ հետ համաձայնելու և սերտ յարաբերութիւններ հաստատելու . միանդամայն իւր ծովեզերեայ քաղաքները և իւր նոր մայրաքաղաքը Ըզհոմ ահագին բերդերով կամրացնէ : Այս ամեն նախապատրաստութիւնները և զոգուցութիւնները 'ի դործ դնելէ ետեւ , Խաղիան կառավարութիւնը չգաղաքիք հարկաւոր եղած յարգանքը մատուցանել սրբազան Վաղիւն հոգեւոր իշխանութեանը , զոր կը ճանաչէ և կըպատուէ քրիստոնէական ջերմանդուութեամբ : Այս բարեպաշտ զգացմունքներէ յորդորեալ Պիոս Իններորդ հաճութիւն տուել է , կըսեն , տեսակցութիւն մի ընելու Վ. Երեմիային՝ յամանուէլ թաղաւորին հետ . տեսակցութիւն՝ որ 'ի մօտ աւուրս տեղի պիտի ունենայ , եթէ հաւատ ընծայելու ըլլաք Հոռմէն հասած վերջին լրոց :

տաժանելի աշխատութեամբ : Յայս տեսութիւն զմայլով 'ի հոգի և զգացմունք զգացմունս զարթոյցանեն 'ի մեզ և բնազդմամբ իմն զկայծ երախտագիտական անկեղծ սիրոյ 'ի վառարանս սրտից լույսեալ ջահաւորեն , որով հասանի մեզ 'ի բաց փարատել զամենայն խորհուրդս խաւարային , և յառաջ մատչիլ 'ի մատուցումն կենդանի զգացմանց որ ըլլան 'ի սրտէ նորահաս եղբարցս , որ որդիացեալս ենք Ձեզ :

Արդ զի մի թերապուք յայս պաշտօն , կարօտիմք ձեռք սրբանուէր աղօթից և վեհանք ներդրամութեան , և ընդունել ազգեւ մեր սովորական քաղցրութեամբ ձերով զրանական բուսոցս հոտաւէտ ծաղկանց քաղցրաւոր փունջս իբր 'ի սրտի արժանաւոր զոր թէպէտ անշուք , բայց անկեղծ զգացմամբ և խորին յարգանք բոլորել փութամք 'ի վեհապետ զընթաց աղղութեան՝ բարեբարաց և մարդկութեան բարեկամաց :

Յնչրաժեշտ պարտք են ամենայն մահկանացու մարդոց , զի ծանկնջն զյարդ անցելոյն , կամ զոհասպան զնեւ կայ վիճակէ և կամ 'ի յառաջադէմ նկրտողին . յոր տակ պարտ է զմտու անկ զանցեալն և բաղաւտեալ ընդ ներկային , եթէ ունի ինչ արժանաւոր վայելու բարեպաշտ պարտ է դո՛ւ և երախտագիտ սրտիւ շնորհակալ լինել առաջին յարգաբարոյց զայն վիճակ իւր բարեբարաւորի . իսկ եթէ ոչ , պարտի ջանալ 'ի ներկային ընդ զտակասութեան անցելոյն և աշխույժ եռանդեամբ վասն ապագայիս զբարիս շտամարանել . իսկ մահկանացուն որ ոչ խորհի զանցելոյն յորում թշուառ էր և արժանի իսկ կարեկցութեան , և բաղաւտեալ ընդ ներկայ բարեբարեալ վիճակին չիցէ զօհոնակ , ապերախտ է այնպիսին առաջին յարգաբարոյ բարեբար վիճակին . եթէ զմարդասիրական զօրնութիւնն և զաւատաւանդեալ բարիս նոյա ուրանայ , ապերախտ է առաջին Ստոռոյ , եթէ 'ի մոռացման հարեալ զնման զերկնային և զերկրաւորս՝ զժողո՛ջ զանկի :



թեանք ընդ ամսաթուով 12—24 Օգոստոսի 'ի մասին  
գործոյ Եւթարին, Տեղական Իշխանութիւնը իմաց կու  
տայ որոյ անկ է, թէ վերաքննութեան մասնաժողովոյն  
օսմանեան հպատակ անդամները ընտրուեցան. որոց  
անուանքը հետեւեալներն են.

Մեծարդոյ տեարք,  
Ապտիւլ Բաստէր էֆէնտի  
Իւլիքէի Մէհմէտ էֆէնտի  
Սնէսթի Բասապօղլու  
Իրիաս Բիւբէճիօղլու  
Յօհաննէս Դուպարեան  
Եւտաս Իսպէս:

## ԱԶԳԱՅԻՆ

Իզմիրի Հայ ժողովուրդը անշուշտ կը յիշէ զՉիլին.  
կիրեան Զակոբոս վարդապետը՝ որ դժբաղդաբար  
ժամանակ մի վիճակիս փոխառաջնորդութեան պաշ-  
տօնը վարեց խիստ անարժան կերպիւ և ոչ սակաւ  
խռովութիւն և երկպառակութիւն յարոյց քաղաքիս  
Հայոց մէջ իւր խարդախ և ապօրինաւոր ընթացքովը:  
Ուստի հարկ կը համարիմք յիշեալ անձին վրայօք  
Հայրենիք լրագրոյն Օգոստոսի 28 թուոյն մէջ հրա-  
տարակեալ յետագայ յօդուածը մեր ընթերցողաց  
առջև դնել 'ի տեղեկութիւն հասարակութեան:

Վերքեմ վարդապետ Հայաստանեայց եկեղեցւոյ  
և երբեմն աշխարհապետ Լուսաւորչեան Հայոց, և  
այժմ բողոքական Չիլինկիրեան հոշակաւոր Պ. Զա-  
կորը բաղմիցս գործած զեղծումներն դարձեալ սկսաւ  
շարունակել, թէ և զխարկն ալ աւանդեցաւ հասարա-  
կութիւնը չխաբուելու համար. սակայն անցեալ օր  
70ամեայ ծեր մը կրկին ամուսնացնել ուզեր է դեռա-  
հաս օրիորդի մը հետ. բայց բարեբաղդաբար դրա-  
ցիք իմանալով՝ Պատրիարքարան լուր տուեր և սլա-  
կի խորհուրդը ետ ձգեր են. իսկ զՉիլինկիրեան լաւ  
մի ծեծելէ և նոյն գիշեր բանտարկելէ զատ հետեւեալ  
օրն ալ ոստիկանութեան յանձնուեր է:

Պ. Չիլինկիրեան յանուն բողոքականութեան տա-  
կաին շարունակել կուզէ իւր ապօրինի ընթացքը,  
և անամօթաբար կառարկէ իբր թէ բողոքական կրօն-  
քը կրկնամուսնութիւն կընդունի, և թէ՛ իւր սլա-  
կածը Հայ չէ. Բողոքականաց երբեք պատիւ չլերեր  
Պ. Չիլինկիրեանի ըսածներն, և երանի թէ այս  
վերջինն ծղած ըլլար:

—Կ. Պօլսոյ փառաշ լրագրոյն Օգոստոսի 28 թը-  
ւոյն մէջ հետեւեալը կը լարդամք.

զմեղ արդ, որ խիստ տարբերի յառաջնոյն. զի կարող  
գտանիմք այժմիկ ճանաչել և համեմատել դատողու-  
թեամբ խորհրդոյ զլուսն 'ի վատթարէն, մանաւանդ զի  
որ մեծն է՝ ճանաչեմք միւր զմեզ, որ է գիտութիւն մեծ.  
ահա այս ամենայն վատտաւոյց և խնամոյց ձերոց ազ-  
դեցութիւնք, Հայր բարի, միշտ զմեզ յերախտադիտու-  
թիւն և 'ի սէր առ Ձեզ՝ որ աջակից գոլով միաբանական  
սուրբ ուխտիւ, ջանիւր և եռանդեամբ քրտնեցայք 'ի  
դատարարական մատաղեւրամ մանկտեացս, ջանա-  
ցիք ձգել մերժել 'ի մէջ զամենայն աղտոկոտութիւն և  
պերկի վարուց, դործոց և բանից, որք արգասիք էին  
անդատարարականութեան և և վերջապէս քանզի չեմք արդ  
բաւական զամենայն թուել մի ըստ միով, ուստի զանց  
առնեմք աստէն զյիշատակութիւն սոյն ամենայն հայրա-  
կան սխրագործութեանց ձերոց, որք քանթակեալ կան  
'ի սիրտս մեր անմոռաց, և այսքանեացն յայտնութեամբ  
շատացեալ յոխամայից լուսն, զի դործով և արդեամբք  
ցուցցուք թէ մեծ են բարեբարութիւնք ձեր առ նուաստ  
որդիս, որք փրկեցին զմեզ 'ի վերջնական կորստենէ: Ա-  
պա յայտ է թէ զենցիկ դիւանս մեր և զդոյն. ոյր վասն  
լցեալ կենդանի զգացմամբ երախտագիտական սիրոյ,  
փութեամբ զգեղուն անկեղծ արդասիս երախտասպարտ  
սրտից մերոց մատուցանել Ձեզ և հետեւապէս համայն  
ազգիս. զի յայս դուրս Առաքելական ներկայացուցիչ էք  
լրութեան Հայ ազգիս, որ ոչ խնայէ զիրօր լուսնայ  
իւր իսկ վասն դատարարականութեան մերոյ 'ի մասնա-  
ւորի, և եղակի բարեբարաց ուսումնարանիս, որք սոզ-  
գասիրաբար հաճեցան և հաճին նուիրել տուրս և յիշա-  
տակս, նոյնպէս և համայն Միաբան Ս. Ուխտիս՝ որ մի-  
ախորհուրդ և համասիրտ գոլով, աշակից գտանի Ձեզ,  
վասն դատարարականութեան մանկանցս:

Արդ՝ սրբազան Հայր, բովանդակելով 'ի մի զհայրական  
խնամս ձեր զանձնադիտութիւն, որ իբր մայր ծնաւ զմեզ

“Վանայ նորընտիր կառավարիչն անցեալ շաբթու-  
տեսութեան գալով Ս. Պատրիարք Հօր, յարգանք  
ընդունուեցաւ: Վըրջամբ թէ այս տեսութիւնը  
օգտակար կըլլայ Վանայ մեր ազգայնոց համար”:

Հաւանականաբար Երբին Սրբազնութիւնը 'ի տե-  
սութիւն և 'ի շնորհաւորութիւն դացած պիտի ըլլայ  
Վանայ նորընտիր կառավարիչն՝ որ Երբին Վսեմու-  
թիւնն ևս արժան համարած է երթալ յայցելութիւն  
ամենա. սրբազան Հայրիկին:

Յարգոյ խմբագիր,

Իզմիր, 1 Մեպ. 1871:

Քանի մը շաբաթէ 'ի վեր Պօլսոյ մէջ կազմուած  
Դատարարական ընկերութիւնը և անոր աւանդելի  
ուսմանց ցուցակը օրագրաց մէջ կարգացած ըլլալովս  
մեծապէս ուրախացայ. որնոր որեւիցէ թաղային ազգե-  
ցութիւններէ անկախ Պօլսոյ մէջ ասդին անդին երկ-  
սեռ վարժարաններ հաստատուել ջանագիր պիտի  
ըլլայ: Գովելի՛ և ազգին յառաջագիմութեան հա-  
մար արգիւնաւոր միջոց և գեղեցիկ նպատակ: Քանի  
որ այս հաստատութիւնները՝ ընկերութեան մասնա-  
կան շահը կ'ենթարկեն, բնական բան է որ անոնց  
ծառայութիւններն եռանդուն և անձնուէր, և ար-  
գիւնքներն թաղական դպրոցներէ աւելի առատ և  
քիչ ատենի մէջ ամենազգալի կրնան ըլլալ. ուստի  
քաջալերութեան արժանի են՝ և անք մեր կողմէն կա-  
տարեալ յաջողութիւն կըմաղթենք: Եթէ կուզենք  
ազգային դատարարականութեան ծաւալումը, ասիկա է  
միշտ միջոց. վասնզի որ և է թաղային ազգեցութեց  
ներքե կառավարուած վարժարաններն՝ իրենց բազ-  
մամայ փորձերով հաստատեցին՝ որ անոնց մէջ մի-  
րինակութեան և յարատեւութեան մոտեքն՝ դժուարին  
եղած է, չըսեմ անհնարին. քանզի քանի որ բազմաց  
ձայնը կըտրիէ հոն և քանի որ ամեն տարի հոգաբար-  
ձութիւնք և տնօրէնութիւնք նորոգուելով՝ կերպով  
մը անձնական կիրքերը սնունդ կառնուն և փոփոխու-  
թիւններն վարժարանաց մէջ անպակաս կըլլան, հե-  
տեւաբար դպրոցներն փոխանակ յառաջագիմութեան յե-  
տագիմութեան կենթարկուին: Ինչո՞ւ Իզմիրի մէջ ալ  
օտար մասնական վարժարաններն այսօր աւելի տեւական  
բարեկարգութեան և յառաջագիմութեան մէջ են,  
քան թէ ազգային վարժարաններն. ինչո՞ւ որ այս  
վերջիններն՝ ինչպէս կըտեսներնք՝ ամեն տարի նոր  
հոգաբարձութեանց հաստատուելուն՝ նարանոր փոփո-  
խութիւններ կըլինեն. որով դասաւորութեան և ուսանողք  
կըջփոթին և անոնց մէջ ոչ թէ հաստատուն կանոնա-  
գիւրքն է տիրող, այլ նորահաստատ հոգաբարձութեան

'ի կեանս անտխեղծ. փոխան այսպիսի հոգեւոր սխրագոր-  
ծութեանց չունիմք ինչ նուիրել, բայց միայն շնորհա-  
պարտ անձինս մեր և զուգի՛ զոր նորդեղով դատարարա-  
կութեամբ մեզ ընծայեցիք: Ձեզ հարցանել ժողովը՝ Հայր  
սրբազան, իցէ՞ արդեօք այլ ինչ արժանաւոր ընծայ 'ի  
նուէր բարեբարաց, բայց 'ի նուիրական և յանկեղծ սի-  
րոյն, որ 'ի բորբոքեալ սրտէ զեղանի և բայց 'ի սրտէն,  
որ շտեմարան է սիրոյ. մեզ այնպէս թուի թէ չիք երբեք  
կամ թէ իցէ՞ այլ ինչ ապացոյց անկեղծ վասն շնորհա-  
պարտ սրտից բայց 'ի զատուեցան 'ի բարեբարէն ճոխա-  
ցուցանելոյ այս և զործով վարուք և արդեամբք զանուն  
Բարեբարին փառաւորելոյ. վերջինն իսկ առաւել հաճելի  
է Ստուծոյ և մարդկան: Այսպէս զխտելով մեք նուաստ  
որդիքս, ահա՛ ներկայ զլուրթեամբ՝ որ թերի յայտարար  
է զգացմանց սրտից մերոց, նուիրեմք Ձեզ, և Ձեօք Ս.  
Միաբանական Ուխտիս և ամբողջ ազգութեան զսիրտ  
մեր և զզգի, և երկրորդ խոստանամք մինչ ցլերջին շունչ  
կենաց մերոց երախտապարտ լինիլ առ Ձեզ, առ Ս. Ս-  
թուս և առ ազգն մեր. և դործով արդիւնաւորել  
խոստանամք 'ի ձէնջ զատուեցալ բարիս գիտութեան և  
կըթութեան, որով համարեմք առաւել կարող լինելիա  
տարեւ զպարտիս մեր, և առաւել քաջալերել 'ի ձէնջ:

Սրդ վերջացուցանելով զբանս, կարկառեալ զգողդո-  
ւուն դատաւար մեր առ վերին պարգեւատուն և նախախ-  
նամոյն Ստուծած՝ մաղթեմք ասելով, Տէ՛ր երկնի և երկ-  
րի, պարգեւեալ յառատ երկնային փառացք զանձուց ըզ-  
պարգես քո, 'ի փոխարէն վատտակոյ ազգասէր սրբա-  
յանին մերոյ. լուր ձայնից խնդրուածաց մերոց և ա-  
ռատաձեռնեա՛ կեանս երկարս և խաղաղալէտս ամենա-  
պա. Հօր մերոյ՝ հաստատուն պահելով յաթոռ առաքե-  
լական 'ի վերայ իշխանութեան իւրոյ, օգնելով նմա 'ի  
տաղտկալի պաշտամանն յորում տառապի վնասք և կա-  
րօտութեամբ օգնութեանց, և տուր Միաբանական Ս.

կամքն ու ազգեցութիւնն. որոց պարտին հպատակել  
դասաւորութեան և և է գիտողութեան, Բայց օ-  
տար մասնաւոր վարժարաններն այսպէս չեն. անոր  
համար է որ օրինաւոր բարեկարգութեան մէջ կըլտ-  
նուին, և մեզ իսկ նախանձելի երեւելով՝ ազգայնոց  
կարող մասը իր դաւակնեքը անոնց կըլղկէ. և ասդին  
վայրապար և յանիրաւի կըմեղադրուին ազգային խեղճ  
դասաւորները, իբր թէ ասոնք են վարժարանաց յե-  
տագիմութեան պառճառք, առանց ըջմտօրէն օրի-  
նաւոր պատճառները ուշադրութեան և քննութեան  
տակ առնելու: Օտար վարժարաններն, ինչպէս ը-  
սինք, իրենց յատուկ և հաստատուն կանոնադրեքն  
ունենալով օրինաւորապէս կը յառաջագիմեն, և անոնց  
մէջ դուռն ուրեք կըպատահին կանոնաց և դասաւորաց  
փոփոխութիւնք:

Ընցեալ տարի ինչ ատեն մեր ազգային վարժարան-  
ներն ներկայ վերջին ամիսներուն պէս անխնամ և  
անտէրունչ վիճակի մէջ մնացին, և դիւստոր դասա-  
ւորութեան խմբովին հրաժարուել ստիպուելով՝ դպրոցները  
միայն քանի մը դասաւորներով կըլաւարուէին. և  
ինչ ատեն ամենա. սրբազան Լուսնորդը ազգին ան-  
խնամութեան վիճակէն վհատած և սիրող կարեւորէր  
խոցուած՝ ազգային վարժարանաց տարտամ կացութե-  
վայ կըտատամէր, ազգային դասաւորաց գլխաւո-  
րագոյններն սրբազանին ներկայանալով՝ առաջարկու-  
թիւն մը ըրին. առաջարկութիւն մը՝ որ վարժարա-  
նաց յառաջագիմութեան և տեւական բարեկարգութե-  
նաց համար օրոշուած 40,000 դոլարին ներքէն  
վիճակին մէջ՝ երկսեռ վարժարանաց համար տարե-  
կան ծախք 40,000 դահեկան օրոշուած էր. և օրով  
հետեւ յառաջ 120,000էն աւելի կըլթար՝ մնացորդ  
80,000 դահեկանը ազգայնոց հանգանակութեամբ  
պիտի ամբողջանար: Երբ այս մասին մեծուած շատ  
միջոցներ անյաջող ելան, անաւան վարժապետք ալ  
իրենց կողմէն առաջարկեցին՝ որ երկսեռ վարժարա-  
նաց համար օրոշուած 40,000 դոլարը իրենց յանձ-  
նուի. և նոյն գումարով վարժարանաց մէջ միայն ազ-  
գին ազգատ և անկարող ծնողաց զաւակներն դաստի-  
արակուին. և այս գումարին համար Սրբազանը կամ  
Լազիկ կողմէն ուրիշմը համարաւոր և հսկող ըլլայ.  
Իսկ կարողութիւնը ներող ծնողք՝ որոշեալ տուրք մը  
վճարելով՝ այնպէս ընդունուին իրենց զաւակներն  
'ի վարժարան, և դպրոցին ներքին կառավարութիւնը  
միանգամայն արտաքին ազգեցութենէ ազատ ըլլայ,  
որպէսզի միօրինակ ու տեւական բարեկարգութիւն  
մտնէ հոն. և չիշք կերպով մը արդի Պօլսոյ դաս-  
տիարակաց ընկերութեան եղանակին պիտի հետեւէին.

Ուխտիս կարտութիւն և զօրութիւն, սէր և յարատե-  
կեանս, զի աշակցութեամբ միմեանց յարգարեացն ըզ-  
խոցս յընթացից յառաջագիմութեան առ 'ի բարեբարել  
ազգիս, և ջանալ ըստ սրբազան Հօրս բաղձանաց և ըստ  
պահանջման պիտոյից ազգին օգնել մատաղեւրամ ընկե-  
րաց մերոց և վարժել զնոսա յՍտուծածահաճոյ դաստի-  
արակութեան, մաղթեմք ո՞վ Տէ՛ր, տուր և ազգի մերում  
սէր և միաբանութիւն զի դործեսցէ ըստ ազգային կոչ-  
մանն. ջեւացո՛ զսիրտս օտարացեալս 'ի կրօնից և յազ-  
գութեանէ զի թողեալ զանմոտութիւն գայցեն 'ի միաբա-  
նութիւն հարազատ որդիութեան ազգութե և եկեղեցւոյ.  
աղաչեմք, ո՞վ Ստուծած մեր բարեբար, վառեա՛ զհուր  
սիրոյ Ստուծածութեան քո 'ի սիրտս օտարացեալոց՝ որք  
կործանուին սոլաւան դամ քան զգամ բովանդակ հի-  
ման աղբիս՝ օտարանալով 'ի մայրենի եկեղեցւոյն. ծա-  
ղեա՛ դքսիւնապարգեւ շնորհացք զոյս 'ի վերայ կենաց  
ազգիս 'ի լուսաւորել զնա հոգեով և սրտիւ և մտօք, զի  
հոգեւոյ աչօք տեսցեն զոյս ճմարիտ արքայութեան քո,  
որ 'ի սիրտս մեր զոլ ասացեր և ոչ աստ կամ անդ. նոյն  
պէս և տուր մեզ հոգի հեղութեան և խոնարհութեան,  
զի մի՛ յամօթ լիցուք առաջի ամենապետ ազգաց քոց, և  
լուսաւորեա՛ զմիտս մեր և զդիւր 'ի ճանաչել զկատար-  
եալ պարտաւորութիւնս մեր առ համայն մարդկութիւնն  
յամբողջ կեանս մեր, և 'իսկ ո՞վ Հայր մեր և բարեբար՝  
տուր մեզ և զձերն օրհնութիւն, զի կարող լիցուք խա-  
ղաղ ընթանալ զճանապարհս կենաց և զուզին յառաջա-  
ղիւր հատանել՝ անվտանգ ժամանակով 'ի հայրենիս մեր:

Ընկալարութեալ աղաչեմք զայս նուէր դուզնաքեալ իբր  
առհաւատ չեալ մեր սրտից, ներելով այն ամենայն թե-  
րութեանց, որ յանդգնչս գտանին անշուշտ 'ի սմա:

Ներսէս Պաղտասարեան Ամբիպի  
Յարութիւն » »  
աշակերտք ժառանգաւորաց վարժարանի:

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՒՄՅՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ